

նոյն՝ իսկ ինծի՝ երբ կարին այցելեցի Ս. Լուսաւորիչ ,
գիտեմ տուին թէ իր շիրիմը, որ չափազանց մեծ
շինուած է եւ խոշոր խաչքարով մը զարդարուած ,
իր ահագնաւիւնը կ'ապացուցանէ : Բայց Սարգիս
գալի բացատրութիւնը որչափ բնական է. Սահակ՝
Ահագնաւիւն ըսուած է, որովհետեւ «ահագնապէս եւ
փողաբարբառ» կը քարոզէր¹ : Շատ հաւանական է
որ իր բեմական կարողութեան արդիւնքով ճանչ-
ցուած, սիրուած եւ կաթողիկոս բնորուած ըլլայ :

«Աստուածաբան»ի եւ «Ահագին»ի բն-
կերներէն, «Շնորհային», «անմարմին»ը, «Նաւն
պետրոսեան», «Մշակը», «Աղաւնի», «Խուզի»ն
(= Գառնուկը) հետաքրքրական դէմքեր պէտք է
ըլլան. այս տիտղոսները անոնց մէյ մէկ կա-
րողութիւններն ու յատկութիւնները բարացուցե-
լու համար դարբնուած են անշուշտ : Ժամանակին
մշակուող բարքերէն էր տիտղոսներ դարբնելու
մոլութիւնը՝ նոյն իսկ ամէնէն բարձրաստիճան
անձնաւորութեանց համար, ըլլայ աշխարհիկ,
ըլլայ եկեղեցական² : — Կըր տիտղոսն ալ ,

1 Ըստ Նաւեանի (Մեկն. Նարեկի, էջ 1135) եւս
«խորիստ եւ փողաբարբառ քարոզիչ» մ'է Սահակը : Օր-
մանեան Պատրիարք գիտեմ կու տայ թէ Սահակ Ահագինի
«Գերեզմանին տեղը փոխուած է եւ ոսկորներուն ահագնու-
թեանը՝ փոխադրութիւնը կատարող Տ. Պետրոս Քահանայն
վկայած է այս մասին» : Ինչ կը թուի թէ Տ. Պետրոս նախա-
պաշարուած է արգէն ահագնա տիտղոսին ահեղ առումով :
— Եթէ շփոթութեան արդիւնք մը չէ, ըստ տեղեկութեան
Պատկանեանց Տ. Գաբրիէլ քահ. ի, զոր հաղորդած է Արժ.
Տ. Յովհ. Ա. Ք. Մկրեանի, էլի Սահակն ալ ահագնա կը
կոչուի եղբր իր խօսելու եղանակին համար : Էլի՛ն՝ այն Սա-
հակն է, զոր կը յիշատակէ Ա. Պերպերեան իր պատ-
մութիւն մէջ :

2 Սա իմաստաւէց եւ սիրուն տիտղոսներու կամ մակ-
գիրներու շարքին մէջ, երբ անիմաստ եւ տափակներն
ալ դիտեմ՝ կը յիշեմ Ս. Ներսէս Շնորհաւոյ գրած «Լոյս»
մակագիրն ամէն անոնց, որոնց հետ կը խօսէր մեր ան-